

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանի ուղերձը Մայիսի 9-ի՝

Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, վետերաններ և ազատամարտիկներ
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:
Իմ երախտիքի և խոնարհումի խոսքերն են հղում ձեզ, սիրելի վետերաններ, քանզի ձեր
հերոսության և արյան գնով ձեռք բերվեց բոլորիս համար թանկ այս օրը:
Շնորհավորանքի և երախտիքի խոսք եմ հղում նաև ձեզ՝ արցախյան ազատամարտի
սիրելի՛ մասնակիցներ, քանզի հենց Շուշիի ազատագրումը դարձավ Արցախյան
հերոսամարտում հաղթանակի գլխավոր կովաններից մեկը: Եվ այս երկու պատմական
իրադարձությունների արդյունքում Մայիսի 9-ը կրկնակի խորհուրդ է ներառել իր մեջ:
Մեր նորագույն պատմությունը բովանդակում է ինչպես Մեծ հայրենականում
հայրենիքի պաշտպանության համար հայ ժողովրդի հերոսական պայքարը, այնպես,
նորանկախ Հայաստանի սահմանների պաշտպանության և արցախյան ազատամարտի
շատ ու շատ փառավոր էջեր:
Հայ ժողովրդի արժանավոր զավակների այս հաղթանակները կերտվեցին բազում
կյանքերի, անկոտրում կամքի ու հավաքական ոգու շնորհիվ, և այսօր էլ մենք
խոնարհվում ենք բոլոր նրանց առջև, ում սխրանքի շնորհիվ ձեռք բերվեց այսօրվա
խաղաղությունը:

Կրկին շնորհավորելով այս պատմական օրվա առթիվ՝ մաղթում եմ առողջություն
և համոզմունք հայտնում, որ մեզ սպասում են նոր հաղթանակներ՝ մեր պետության
խաղաղ կյանքի և առաջընթացի ապահովման գործում:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

8 մայիսի 2014թ.